

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

ՏՊԱԽՈՐՈՒԹԵԱՆՅ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ ՅԱՅՐԱՐԱՏ

Դ. Լ. ՄԱՐԴՈՎՅԵՎԻ

(Շարունակութիւն և վերջ. տես Հտր. ԽԲ. 305):

ԺԴ

Ի գաղաթն Արարադայ. այլ ոչ ես:

Որպէս զի ընթերցողաց տեղեկութիւն տամ, թէպէտ ոչ լիակատար իմ քով ընկերացս կրածներուն մասին, դէպ 'ի վեր Արարադայ վերայ ելնելու միջոցին, զիս Գրգըլպալ — ուշաքննորուն վրանին մէջ հիւանդ թողլով, մէջ կը բերեմ Պ. Կոկչայե-

վի գրածը Կովկաս լրագրին մէջ: «Թողլով հոս գիտնիէլ Լուկիշ Գողաքի մի հետ, երկու հեծնալ զօրականով և մի ծառայով, մեք 'ի լեռան վերիքնիս շարունակեցինք, հարաւէն դէպ 'ի հիւսիս. և հասնելով այն կէտին, ուստի կարելի չէր առաջ երթալու ձիով, կանկ առինք, և ուրոշեցինք հետիտնա շարունակելու:

«Բոլորս տասն հոգի էինք. հոս թողլով չորս հոգի, մնացեալքս՝ Սիվուբով, Զեւինսքի, Գողաք մի և երկու ֆիւրքը և ես՝ առաջ անցանք, կամաց կամաց մեծամեծ դարուփոսներու հեզրքէն և անհամար քարակոյտներու չորս կողմէն: Անցնելով այսպէս երկու երեք դարուփոս, և քանի մի ձիւնապատ էջեր, հասանք փոքր տափարակի մի վերայ, որոյ չորս կողմը ձիւնն չըրջանակած և պատած էր, ուր մութը վրայ հասնելով՝ գիւերօթիւն մնացինք:

«Ետեկորնէս կու գային երկու պարսկու ստանցի ֆրդեր, չալկան գիւերտան կարեոր բռններով, Նոցա հասնելուն պէս՝ կրակ վառեցինք, չայի պատրաստութեան համար: Ունէինք հետերիս աղքատին կաթնայ մի, որոյ մէջ չաղիւ երկու երեք զաւաթ ջուր կը բովանդակէր, այն պատճառաւ մեր չայ խմելը շատ երկար քնց: Հարկէր ամէն անգամ նոր ջուր խնդ կաթնային մէջ. ցրտութիւնն աւելցաւ, ջերմաչափն $8\frac{3}{4}$ աստիճան կը ցուցնէր ըստ Ռէօմիւրի. կարեւոր եղաւ ցրտութենէ պատճառաւ: Պողաքն անկողիններ պատրաստեց, այս անգամ ինձ համար փռեց մեր

գետնին վրայ պատտաւ մի, և հաստ վերմակ, ընկերներս այն ևս չունէին, այլ օգն երթալով կը ցրաէր փաթթուած մեր հաստ փայտներուն մէջ, և վերմակներու տակ ծածկուած, գողգողալով չայի կարգին կը սպասէինք. այլ կամէտ կաթնային չնայելով որ ներքեւ կրակ կը վառէր, ամէն անգամ նոր լեպտելունք մեզի երկար սպասելու տար. կարգով չայը խմեցինք մինչև ցվերջին կաթիլ. կարգաւ կ'ստեմ, զի չգիտեմ ինչ՞եւ միայն երկու զաւաթ ունէինք հետերիս: Սոյն միջոց օդոյն մէջ խաղաղութիւնն տիրած էր, երկինքն պարզ և թափառցելի, և բովանդակ աստղերն փռ 'ի վառ կը փայլէին: Երբեմն կը մրտփէի, այլ ահագին երազը չուտով զիս կ'արթնցնէին: Գլուխս անկողնէս վեր վերցնելով մտիկ կ'անէի գիւերական բովանդակութիւնն անձանքի մեր, և երբեմն լեռնէն փրթող քարերուն ահագին դղրդրգիւնն մարմինս դող կը հանէր: Այն զիւերին իմ վրայ ըրած ապաւորութիւնը դժուարին է գրով աւանդել: Միակ այն մը տառնութիւնն՝ որ նոյեան տապալնին մօտ պառկած եմ, միտքս կը տանէր 'ի սահմանս հրաշալի աւանդութեանն, որով հարուստ է մեր հին աշխարհն:

«Ինչ աղօտ երեցաւ լոյսն. ամէնքս կայնած հետագօտ աչօք կը գննէինք հորիզոնի վրայ արշալուծոյն նոր ճառագայթները: Զերմաշափին նոյն միջոց չորս աստիճան ջերմութեան կը ցուցնէր: Մենք մօտեցել էինք Արարադայ առաջին բարձանց, երբ առաջին ճառագայթը նորածագ արեւուն լուսաւորացին լերին հարաւային արեւելեան երեսը: Ատի երեցաւ՝ որպիսի տիտանացի ճանապարհ գեւ ևս մեզ կը մնար կտրելու անցնելու: Որչափ առաջ կ'երթայինք, այնչափ նուազ կը մօտենայինք մեր նպատակին. ելքն քանի երթնար տիգժուարանաւ. իսկ Մասնայ գաղաթն երկնից մէջ կը կորսուէր: Մագլիցինք սարեւոր ժողովարանէն դարեւուն վրայ, և չնայեալ զի մեր բախակամ հետամտութեան, ա-

ՊՐԱԿ Ա.

ZUSIT-ARM GUP

մէն վայրկեան հարկ կը լինէր խնաւ քա-
րերուն վրայ յոգնածութեան շնչարգե-
լութեան առաջն տռնելու համար: Արեւի
հայած ուղւոյ մի հետեւելով, որ սաստիկ
զժուարակօխ էր, երբեմն սեպ՝ գէպ 'ի
վեր, երբեմն ճեղքերու և փխրուն քարե-
րու վրայէն կ'երթայինք: Մեզմէ գէպ ու-
րեւելան կողմը՝ տափարակ գայր մի խո-
շոր սառուցով ծածկուած էր, որոյ վրա-
յէն փայլակի արագութեամբ կը սողնէին
գէպ 'ի վար՝ հալած ձիւնին հետ կախուղ
քարերու կոյտեր: Դարատափս անակող-
մէն կռթնած էր կոնածն հրուանդանի մի,
որ Դուրիկ-դաղ կը կոչուի և Մասեաց ա-
րեւելահողման գոտւոյն մասն է: Ժամը
տասնին այնպիսի կէտի հասանք, որ շատ
բարձր էր քան զփորքն Մասիս: Աստի՛ բո-
ւմանդակ ձորն իբրև խոր անդունդ կե-
րև էր: Բոլոր շրջակայք՝ անծայր տարածու-
թեան մէջ կորսուած. և դաշտը առհասա-
րակ միգով ծածկուած: Արարադայ գա-
գաթին աստիճանաբար ճերմակ պատանի
ներքե կը ծածկուէր, և նորա կողմնակի
պատառուածքներէն գունդագունդ գոլոր-
շին վեր կ'երէր: Հոս փշեց առաջին անգամ
ցուրտ քամին, այն պատճառաւ ընկողմու-
նեցայ քարանց ճեղքին մէջ, բրտուած կըռ-
նակ պարուռն տալով: Նոյն միջոց գայրի
որ տակաւ բոլորովին ուժէ կ'իյնամ, աշ-
քերս այլ ընդ այլոյ կը տկանն, արիւնը
գլուխս կը զարնէ, վատ է կացութիւնս: այլ
ուրիշ բան չէի կարող անել, բայց եթէ
շարունակել վերելքը, զի սաստիկ 'ի վար
գառնալը՝ այն բարձրութիւնէն և այնչափ
ծանր աշխատանք կրելէն վերջը՝ ուժթ էր
ընկերացս դիմաց, և իմ իսկ անծիւ գէմ
անգատունէ: Անտանիկի զժուարութեամբ
գործնալ շարունակելիք ճանապարհս: Յետ
ահագին բռնութեան՝ յանկարծ ինքզինքս
գտայ այն յիշատակարանին քով, որոյ
մրայ իւր անուան սկզբնատառքը կ'աշխա-
տէր փորագրելու Պ. Զելինսոյ: Այն իսպա-
մի է. որոյ թեւերն չկային, անդուշտ մեզմէ
առաջ հոս երնողներէն կանգնած: Ես ևս
իմ անուանս սկզբնատառքը փորագրելի
վարի մասին մրայ, և ամբողջի խաչը:
Թեւերն անդուշտ խառնաշուժ ձիւնուայն
տարերաց բռնութեամբ կործանուած էին,
և քարակոյտներուն մէջ խառնուած: Հոս
սակաւ մի հանգիստ առնելով՝ ընդ քարը
սուռջ գնացինք. ընդ քարը կը դրուցնամ,
վասն զի ես քայլել չէի կարող, այլ քարէ
քար և ճեղքէ ճեղք կը ցատէի: Մեզմէ
հարիւր քայլ հեռու նստած էր մեր եր-
րորդ ընկերս Սիվալորով, ձեռքը բռնած այլ
յիշատակարանի կտոր մի, քան զառաջինն

աւելի մեծ, նոյնպէս առանց թեւի, որ ան-
շուշտ առաջնայն բաղդին հանդիպած էր:
Այսպէս և այնպէս զգացի ես՝ որ բոլորու-
վին ուժաթափ եղելեմ: Գարծնալ քանի մի
քայլ առաջ գնացի, սաստիկ բռնութիւն
անկողմ անծիւ մրայ, այլ հորիկ կղաւ կանգ
առնուլ: տարածուեցայ քարի մի վրայ,
սիրտս կտորած՝ յուսարեկ: Տագնապողա-
կան էր զիրքս, այլ ուղղադատութիւնն
յաղթեց, որոշեցի որ գաղտնիքնմ վերել-
քս: Բոլորովին ուժէ ինկած էի, սաստիկ
կը հեւայի, սիրտս ճնշուած էր անօտարցած
օդէն: Մինչև 'ի ծայրը շատ տեղ մնացած
չէր, մի քորվիր ևս, որ աւելի շէր կար-
ծուեր քան 900 ոտք, այլ այդ 500 ոտքն
ինձ աննկանելի էր: յաղթանակն իմ ուժէս
վեր էր:

« Խոնարհութեամբ ծանրով ընկերներ-
րուս և հրաժարականս տալով կարծես իմ
վրայ ծիծաղող Արարադայ գագաթան, կըռ-
նակ գործուցի, որ յետ իմնեմ: Այլ հոն
պառակցայ քշլի մի հանգչելու, և յանկար-
ծակի խոր մտածմանց մէջ ընկզմացայ՝ թէ
ինչպէս ազգ մարդկան հոս իւր խանձա-
րուրքը զրած է, սրշափ սրբազան մոա-
ծութիւնք կապուած են լերանս հետ: Ապա
զգոտանալով կանգնեցայ, և վերջին տե-
գամ՝ կանչեցի ընկերացս. Նորէն տես-
նուինք, տեսքը:

« Երկրորդ բարձրաւանդակէն իմնելու
միջոց՝ յանկարծ տեսայ որ 200 քայլ հեռա-
ւորութեամբ ետեւէս կու գայ Պ. Զելինսի:
Ապասեցի որ գայ միման. իմացայ նորա-
մէ՝ որ նա ևս հեռակ է ինձ, չգիմանալով
զիսի սաստիկ ման գալուն և սրտի խա-
ղին:

« Քառորդ ժամէն վերջը կրկին հրացա-
նի քարուածք ազգ արարին մեզ՝ որ Սիվա-
լորով և երկու Քրդերն հասել են 'ի գա-
գաթն Արարադայ: Կ'երևնային ևս շարժա-
կան սև բծեր գագաթան ճերմակ ձիւնին
վերայ, Դոքս մեր ընկերներն էին »:

Պ. Զելինսեայ պատմութիւնն թէ ինչ
յուսուհատ վիճակի մէջ մնացել է նա, երբ
գրեալթէ Արարադայ ձիւնեղէն գլխարկին
մրայ՝ աչքէ կրուսեւ և զՍիվալորով և ըզ-
Քրդերն, և բաժնուել է միւս ընկերներէն,
աւելի խոր տպաւորութիւն ըրաւ իմ վրայ:
Ելք սեպտեմբեր ժայռերուն վրայ այն աս-
տիճանի տկարացուցել են զնա, և անօս-
րացած օդն ի ծծմրային խղզուկ շոգիով
այն աստիճանի ճնշել են նորա թոքերը, որ
չունն հասնելով ցնորել և Սիվալորովայն
միակերպ սիրտը ետ է եկել, և վախցել է
որ արիւն չիսխէ: Նա այնպէս է կարծել,
որ այլ ետ գառնալ կարելի չէ. զի մոլորե-

լով անգնդացի և ժայռերուն մէջ, նոսրոշել անգամ կարող չէ հզօն թէ ընդ ուր պէտք է վար իջնել, Կիւմանայ որ շարժելու կարողութիւնն տկարացած է, կ'ուզէ ինչպէ՛ր ի գետին և բուն լինել մինչև ցմբուս օր, այլ կը նշմարէ որ ամէն կողմ արջի հետքեր կան. փորձաքիտ փորձաւորքի վրայ։ Այլ ինչպէս կարողեղ էր այն ահուոր բարձրութիւնէն վար իջնել միայն Արաուած գիւտէ։ « Եւ մտածեցի որ հարկ է հրօթարիւ ի՛ն կենաց. այլ տես օր չէ։ Միակերպ սիրտս կը բարախէր, իբր թէ ուսով դարնէին. խեղճ ոտքերս ուսած . . . վաղը ինչպէս կ'օշիկ հագուիմ » . . . Այլ ինչե՛ր չէ կրած այդ ահաբէ լեռնիկի բուն գիւցազնը. կը յիշեմ նորոտկարագած թառախական պատմութիւնը. այլ կը ցաւիմ՝ որ բառաւ րաւ չեմ կարող գրելու. Հոս կրեմ մէջ բերել քանի մի տող նարա նամակէն, գրուած ի՛ 29 հոկտեմբերի, յորում նա կը ստորագրէ՝ օգոստոս 11ին (1882) նորա վրայ ըրած ապաւորութիւնը, որ նշանաւոր էր մեզ ամենուս համար։ Նոյն ձեռով մէջ կը բերեմ, ինչպէս որ գրուած է հեղինակէն, քաղաքագէտ ճշգրտութեամբ։ Նամակին ոճն խոր ճշմարտութիւն և հաստատութիւն կը չնչէ, յորում է և նուրա մեծ յարգն. զի չկայ Հոս ոչինչ հնարուած կամ մեծացուցած և ոչ զարդարուած, ոչ ճարտասանութիւն և ոչ չափազանցօրէն նկարագրութիւն՝ իւր գիւցաղանգործութիւնն։

« Անտի սկսիմ, կը գրէ Պ. Արմէրորով, երբ թողինք զձեզ Քրդաց վրասին ներքեւ, և մեր ու՛ր երեկոյին հաստեր լերան կոտածինք մօտ, այսինքն մինչև ձիւններուն սահմանը, և հոն անցուցինք այն գիշերը։ Ահազօր երեցաւ մեզ գիշերն քարերու թաւովանէն. զգորդին և արձագանդը՝ մէկ մէկու ետեւ միակերպ կը կրկնէին, և ապաւորեան մէջ կը ձգէին զմեզ, մասնաւորապէս իմ ընկերներս Պ. Կոկչայեով և Չ. Լինսիքի։ Միւս օր վաղ առաւօտ արթնցուցի ընկերներս, ի՛ 11 օգոստոսի. չայ խմցինք և նախաճաշեցինք. այդ միջոցին կը խօսէին, և իւրաքանչիւր որ կ'աշխատէր գիշերուան վախը փարատելու։ Սակայն և այնպէս մեր զարմանքն և հիացումն՝ երկրաչափական օրինք կը բաղմապատկուէր։ Խոտակցութիւն վերջը հետևեցանք նախագծեալ ճանապարհին։ Առինք հետերս Բուրլաքով Քոզաքը և երկու Քրդեր, Բաբա և Մահմուդ, վեր ելնելով շատ մեծ քառու լեռներէն, որոց անծայր երևոյթն հիւտուն կը յանգէր կայսին քարով։ Այս երևոյթէն զատ՝ կը տեսնէինք որ մեծա-

մեծ քարեր կը թաւալէին ի՛ վայր, Բնկերներս՝ այս քարերուն ամէն զորդեղուն՝ ինձմէ ետ կը մնային. նոյա ետէն կու գար Քոզաքն. իսկ Քրդերն կը բերէին ուտելիք և շէր մի կ'ախտէին գինեղ. Քանի մի վայր կ'ենէն՝ նորա կորուսին դիւ աչքէ. զի նրա տեղով քարի մի ետեւ կը տալատէ նոյոտ հասնելուն։ Մեծ գծաւորութեամբ հասան, և նստանք ճաշելու։ Նոցա ձեռքն ուստր կը գողային, և նոցա երեսն ձեռմակ կտաւի գայն էր. կ'ախտաւէին սքրտերնուն վախը քօշարիկել, այնպէս կ'երեւցնէին թէ յուսահատած չեն շարունակելու ճանապարհը։ Խօսքս հոտաւտելու մտք՝ մէջ բերեմ Պ. Զիլինսիքի պրօքսածը. նա այսպէս երգողնուցաւ. « Եթէ չեւենեմ ծայրը՝ թող պայթի որովայնս » . . . : Նախաճաշէն վերջը՝ մի մի դաւաթ գինի խմելով՝ եւանք տեղերնէս և ի՛ վեր գնալցինք։ Լուսալայնածաւ արեւն իւր տաղուկ ճառագայթներով առատապէս կը ջերմացնէր զմեզ. այլ արեւմտեան պաղ քամին չուտով միսեցոյց։

« Զանազան ձեւերով անծայր, անվերջ քարեղէն աստիճաններն՝ ընկերացս վրայ երկրի և սրաւարկի թիւն աղգեցին։ Եւստով թողլով՝ գնոսա՝ առաջ տնցաւ, և հասցաւ սեպածն. և անհրաժեշտ ծայրի մի ստուրտ, և հոն քուածն քարերուն ներքէնստա՝ շատ սպասեցի ընկերացս և գուար. ճայտը բնութեան գեղով։ Բոգնում զա. գրած՝ թողլով՝ ի ճանապարհին պալաւոր և նոյն իսկ վերնազգեստները, միայն բաճկոնով չնշառապաւ ելան մօտս, և բուլն նստած երկար դիտեցին չորջ բնութեան վրայ, և այս ժայռի վրայ, որ սեպածն 70 ոտք բարձրութեամբ վեր ցցուած էր, կային կանգուն ցարասի փայտէ խաչեր որք չշիտեմ որոյ ձեռք հոն կանգնումս էին։

« Հոս՝ բարեւ մնայք ըսի ընկերացս։ Կս, Զիլինսիքի, Քոզաքն և երկու Քրդերն՝ ճանկելով, մազցիլով՝ երանք ժայռիս գագաթը. այլ Պ. Կոկչայեով երկար հոն մնալով՝ գնեղ կը դիտէր։ Կս Քրդերուն հետ շատ բարձրացաւ, Պ. Զիլինսիք և Բուրլաքով Քոզաքն մնացին խաչերուն քով։ Մեք ումէնքս քարերէն վար ձուած՝ կը նայէինք ուղղահայեաց դէպ ի՛ Պ. Կոկչայեով և նա զլիւնէ գլխարկը հանելով՝ ծռեցաւ դէպ ի՛ մեզ, լայի՛ ճանապարհ մաղթելով, և ինքն ետ գարձաւ։ Նստելով հանգիստ առնելէ վերջը՝ ուղեցի բան մի հարցունել Պ. Զիլինսիքայ. այլ նա կարողութիւն չունէր պատասխանելու. ձեռքով նշան արաւ որ այլ հարցումներ չսնեն։

« Սնցաւ քանի մի վայրկեան, ես և Քրդ-

դերն ուղեցիներ ուռաջ երթաւ. նոյն ատեն Պ. Զեյիստի որդի և սիրտ անկողով, այլ մեղմ ծայտով, անուան տուաւ « Իվան Թէն » գործան, հանգչիներ սակաւիկ մի եւս. եւ բռնովին ու ծաթաւի եղել եմ » : Նոր քարի մի վրայ ելած՝ քիչ մի սպասեցի. այլ անհետ լով որ Զեյիստի իրեւ մեռեալ սեպակ էր, այլ չսպասեցի. Քոզմբը նորա մօտ թողնով, առաջ անցաւ. Քոզմբը հետա էին Զեյիստի մէկ կամ երկու քայլ եւս 'ի վեր ելաւ, նայեցաւ մեզի եւ առ 'ի կախ՝ քարե-րուն, և վախեալով ետ դարձաւ :

« Եւ միայն մնացի Բարայի և Մահմուդի հետ. Մահմուդ հրացան կը կրէր, իսկ Բարա՝ մի լիւ Կախեթու գինի. Նոր գծար ելունելի արգելքներուն յարթելով, հասանք կրային հողին, որ կէս վերստ եւ վեր է քան զվերջի խաչերը, գտանք ածուխի հետ, և հաւու փոտած ոսկորներ և Սյա կէտէս զէպ 'ի վեր՝ ճանապարհն դիւր էր սակաւ մի, համեմատելով անցածն երես, այլ օգն ծանր, և քանի վեր ելանք՝ այնչափ շնորհակալութիւնս գոտարցաւ :

« Այլ կրային դիւր դարն ունի մէկ ու կէս վերստ երկայնութիւն, և կը հասնի Արարազայ կարծրաքար շրջանակին, որ 100 քայլ բարձրաթիւն ունի, և ընդ մէջ կտրելով անցանելով կրայառն խաւը, մի ծայրով կը հասնի ընդհանուր ձգուած ժայռին հարաւային գոտին, և միւս ծայրով նոյն գոտին անկողման մշտնկեանուոր ձիւնեւ, որ մեր գիշերօթիկ անղէն ծածկելով բովանդակ հիւսիսայնով՝ մինչեւ Արարազայ գագաթը կը հասնի : Նոյն ինք կրային գարն՝ լեռանց գոտիի ձև ունի, 'ի ձախմէ՝ երկար շարքով արեւմտան կողմէն կը պաւնէ սեպածեւ ծայրը, որ և արեւելակողմէն ման գալով՝ հոն կը յանգի, ուր ծայռն հիւսիսային ձիւնեւ ունէ հետ միացած է : Կիրն կանուղ է, և ծածկուած ամենուրեք, իբր հրաբխային ծակերով, որով անկարելի է վրան քայլելը : Այլ շնչափողերուն քով կը գտնուին բիւրեղի կտորներ, որոց օրինակ մի բերել էի մեզի ցուցնելու :

« Այս գոտին երբ կէսը հասնուի՝ գգա-ցիք այնչափ յոգնածութիւն ու շնչարգե-լութիւն, որ երկու երեք քայլ աննելով՝ հարկ կը լինէր կանգ առնուլ, և նոյն միջոցին կը շփէինք կուրծքերին և գլուխինս ձիւնով, կ'ուտէինք նոյն ձիւնէն, և զըլլա-արկներնուս մէջ կը լեցնէինք. այնպէս սաստիկ էր սրտերնուս բաբախմանը, որ զգայութիւննս կը կորսնցնէինք, ոչ մի-այն լեզունս կը կապուէր, այլ և ոչ իսկ կրնայինք վար ծռելով առնուլ ձիւնը և չիւնէ կուրծքերինս և գլուխինս :

« Սաստիկ յոգնած գոգրած իմ Քիւրդ ընկերներով, այլ ձիւնին և նորամէ վա-լած ջրին օգնակալութեամբ, որ արեւէն կը հայէր, ոտն առ ոտն առաջ գնացինք, և հասանք վերին տափին, այն է կարմիր քարին, և ուր երկու անգամ՝ հրացանը պարակցինք : Այս քարէն մինչեւ ցտեսա-նելի բարձրագոյն կէտը գնացինք գար 'ի վեր ծաւառեան, որ ծածկուած էր մշտն-ջնաւոր ձիւնով, միջոց ճամբան էր կէս վերստ. ուր շէին ուղիւ երթալու ընկեր-ներս, նաև ինձ կ'աղաչէին լմնցնելու հոս մեր ճանապարհը. այլ ես առաջ եղեալ նպատակս չհասած՝ չէի կարող հոն մնա-լու : Աստուած յօգնութիւն կանչելով՝ առաջ անցաւ. եկան ետեւէս Քոզմբը, գրե-թէ ծնկաչափ ձիւնին մէջէն առաջ գնա-լինք, աչքերս զէպ 'ի յայն կէտը տնկած, իբր ելանք վրան՝ տեսանք յարեւմտակող-մը, այլ գնդաձև բարձրաւանգակ մի քո-ռորդ վերստ մեզմէ հեռու, որը գարկերն դիւրին էր : Զիւնն՝ ինչպէս քարին վրայ՝ նոյն և այս բարձրակէտերուն վրայ միա-կերպ է, լեռանս գագաթէն զէպ 'ի հիւսիս, կանուղ է, այլ 'ի հարաւ կոյս, արեւուն ճառագայթներէն ձիւնեւն ասեղի ձև կ'առ-նուէ. խորութիւնն կէս ծնկաչափ, որոց տակ ստած է, վրան ջրի մանր կաթիլներ : Այս բարձրագոյն կէտէն զէպ 'ի յարեւ-մուտք՝ ուրիշ այլ կէտ մի եւս կայ, նոյն բարձրութեամբ, հորիզոնական դիրքով, 200 քայլ մէկը միւսէն հեռի : Այս կէտերը մէկը միւսին կը միացնէ ձիւնով ծած-կուած նեղ պատաստածք մի, լայնու-թիւնն երեք քառորդ կանգուն, խորու-թիւնն անձանոթ : Պատկած՝ ճեղքին եղե-րաց վրայ, գաւազանէ մէջը խօթեցի, զար-կի կողմնակի պատին ստոին, կարճ և ան-ձայն եղաւ արձագանգը :

« Արարազայ գագաթան վրայ՝ անօր-օրին և արեւելեան հովին պատճառաւ եր-կար մնալ չընցանք : Եւրը բոլոր որ տե-սանելի էր մերկ աշաց՝ կը ձգուէին զէպ հորիզոն կոհակած լեռներ և ձորեր, ո-րոց վրայ՝ հազիւ տեսանելի կը փայլէին օ-ձապտոյտ առուները. յոյժ ակնապարար էր տեսարանն : Այլ կատակ և Սիւս ծռ-վերն, ամառնային տաք օրուան պատճա-ռաւ՝ ծածկուած միգով կամ շամանգաղով անտեսանելի կը մնային :

« Արարազէ իջնելու միջոցիս՝ ծուր-դրած՝ շնորհակալութեան աղօթք մատուցի Աստուծոյ : Վերը թողով Կախեթու գին-ւով լիւ մի սկսանք իջնել : Որչափ որ վար կ'իջնէինք, այնչափ արտօթիկ կը լինէր օդն և կը զօրանայինք. իսկ երբ եկանք 'ի վրան՝

մնացեալն արդէն իսկ ձեզ ինքն ծանօթ է ։
« ՅԱրալըխի մէջ ձեզմէ բաժնուելէ վեր-
ջը շատ բան քաշեցի . մեծ քանակութեամբ՝
քթէս արիւն գալով . տասն օրէ վերջը դա-
դրեցաւ քթիս արիւնն , և կոկորդէս սկը-
սաւ դալ , և այնչափ շատ՝ որ անգամ մի
ամբողջ կոնք մի լեցուց . և այդ շարունա-
կեց մինչև ց՛ն սեպտեմբերի . ոչ ամէն օր
կը պատահէր , այլ Յ օրը մի անգամ . այժմ
Աստուած ողորմեցաւ , արիւն գալը դա-
դրեցաւ , և ես սկսայ կապտորիլ » ։

Այս նամակէս վերջը գեռ չունիմ՝ տեղե-
կութիւն Արմէյրեթով և ուղղութեան մա-
սին . այլ շատ ցուալի բան պիտի լինի , ե-
թէ մեռնի այդ մարդն : Մէջ բերած նամա-
կին յօդուածէն կ'երևի , որ հիւանդութեան
հետ նա կորուսած չէ գեռ արութիւնը : Կը
յաւելու նամակին մէջ . անոնց որք կասկա-
ծին դրուցանելու և ստուգութեան վրայ .
« Եթէ , կ'ասէր , մէկը փափագի համոզուիլ
առ ձեզ գրածին ստուգութեան մասին ,
գալ տարի թող հրամէ գայ , 'ի միտսին
նորէն կ'ընենք 'ի վերայ Միծին Մ'անայ » ։

Գծուարին է բացատրել այն խոր տալա-
ւորութիւնը՝ զոր կը զգայ մարդ նման առ-
թից մէջ , ինչպէս է վերելքն Արարադայ
Սփարի — Ալթնումով , օրինակի համար ,
ոչ թէ ուրախութիւն զգացել է , այլ ցուրտ
սրտաբեկութիւն մի և ընկճումն , մինչ բար-
ձրանալով լեռան 'ի վեր' հարիզն ընդար-
ձակուել է նորս գիւմաց . « Աստուած իմ ,
մտածելի ես , կը գրէ՝ նայելով նոր տե-
սարանին վրայ . քանի՜ մեծափառ կը փայ-
լին այդ երկու սառնապառ լեռներն . քա-
նի՜ գեղեցիկ է բովանդակ ձորն , լուսառ-
բած արևուն ճառագայթներն , որ անթիւ
ազամանդներով կը վառի . այլ ես չիմ'երե-
կրիք եռանդագին այդ տեսարանով , պաղ
է ոգիս և սրտաբեկ . բնութեան մեծու-
թիւնն կ'ընկճէ իմ զօրութիւնս » ։

Այլ երբ մերձեցաւ նա գագաթին , ա-
կամայ այս բացագանչութիւնը կ'անէ . « Տէ՛ր
իմ , իբրեւ է արդեօք՝ որ կը հասնիմ՝ այն
բարձրութեան , ուր ըստ սուրց ճարտարա-
խօս քաղված հմուտ Գուրնեֆորի , Նյոյն վեր-
ջը մարդու ռոք կոխած չէ » : Նա գագա-
թան վրայ կայնամ՝ գրեաթէ նոյնը կ'ասէ ,
ինչ որ գրեց Սիվուդորը , և Մ'առնելով գո-
գածին , որ երկու գագաթները իրարմէ կը
բաժնէ , տեսայ կախուած ռառուցեալ ձիւ-
նի կոյտեր , որ 'ի հարաւոյ կը գուրանար և
չէր ահաւոր . այլ չհաւատարով աչքերուս
մտքնս կ'անցընէի . Այս չէ՛ արդեօք ան-
անցանելի սահմանն . չէրն արդեօք հոս
սահաւոր խոռոչներ : Նոյն միջոց կը քոյ-
լէի կակղցած ձնան վրայ , և չէի տեսներ

ոչ մի ընդդիմակադ տրդել : Ձիւնեղէն առ-
տիճանները տաւրտեղու վրայ էին , բոլոր
մարմնով գող ելած , յուրախութենէ և
վախէ , որչափի տատնանէն այնչափ անց-
նիլ : Ոտքս հասաատելով աստիճանին ստո-
րին մասին վրայ , գաւազանիս (տէգ) վրայ
կոթնած՝ ինկայ յետին աստիճանին վրայ ,
որ վերջինն էր Արարադայ հիւսիսային — ա-
րևելեան գագաթին — տափին : Ուրախու-
թենէն չուշնս կը բռնուէր ։

« Դունչ մի առնելով՝ ցառքեցի ինկած
տեղէս , և գրեթէ վազելով ելայ դիւր գա-
րին վրայէն մինչև 'ի գագաթը . . . Յաղ-
թական ձեռով կանգնեցայ բարձրագոյն
կէտին վրայ , բարձր բռնած գոցալը և
ձեռքերս , և տկուսայ նոյն վայրկենին խաչ
մի ձեւացայ , 'ի վերայ արծաթեայ թագին
բնութեան յոխորտ Նոկային » . . .

Սփարի — Ալթնումովի վերելքն յԱյ-
րարադ շատ յաջող կերպով եղած է : Նո-
րա գրածը կարդալով առաջ կ'ասկածե-
ցայ զէպ 'ի Ս . Գրոց լեռան ճանապարհոր-
դին ճշմարտագոտութեան վրայ . ինձ այս-
պէս երեցաւ՝ որ անկողնի է երկու օ-
րուան մէջ անոր ծայրը հասնելը Սյլ գիտ-
նալ կարեւոր է՝ որ Ալթնումով ելած է լեռ
1835ին , որով առաջ քան զ1840ին ժամը ,
և Ալտոնէ չիտակ վեր ելած է , որ այժմ
երկրաշարժէն 'ի գետին անցած է : Հիմայ
Ալտոնէ վիւր ելնելը մեծ յիմարտութիւն հա-
մարելու է , զի Արարադան այս կողմն պատ
մի է : Ժաժն լեռանն այս կողմի ձեւը փո-
խել է յանմատչելի օնալ , ուստի այժմ ևս
հետզհետէ 'ի վայր կը կործանին սառոյցը
և փխրուն ծայրը : Գեղեցիկ օդն ևս մե-
ծապէս ձեռնառու եղած է նմա՝ վերելոց
միջոց ։

Բայց ահա ինչ կրած են խոժոք և նորս
ուրիկիցներն , խանիթով , Ալեքսանդրով ,
Մորից , Ուսար , Դարոյեան և 60 զօրու-
կանը , ժամէն վերջը Արարադայ վրայ ել-
նելու և միջոց , ուրիշ կողմէ և վատ օգով :
Այսպէս կը գրէ խանիթով իւր յիշատա-
կարանքով մջ . « Երկիրքն՝ որ առաւատուն
պարզ էր՝ սկսաւ ամպերով ծածկուիլ ,
ժամը 1 1/2ին փչեց բուռն արևմտեան քա-
մին , վեր ելնողներու վրայ ցանկելով սա-
ռուցեալ սկիւր , որ անհլորներն վերին
օդայն ցրտութեան նշանն էր » : Սպասե-
ցին ելնողներն՝ որ անցնի փոթորիկն : Այլ
'ի զուր էր մեր սպասելն , կը գրէ խանի-
թով , տեսնելով ժամը 2 1/2ին՝ որ փոթորիկն
աւելի կը զայրանաւ , թախ և թանձր խաւձ
բեր կը պատեն գագաթը , որոշեցինք առ-
ռաջ զնայու , որ կարինանք պատապարուե-
լու մըրկէն գարու փոսներուն քարանցներ ,

քե »։ Այլ դժգոհութիւն չէ բառի առաջ
գնալու, բայց երեսներուն փշելով և հոգն
խոշորեղոտն լինելով։ Ստիպուած կանգ ա-
ռել են, և ուղարկել են զօրախանները զէս
ի վար։ զի ժայռերուն տակ ամենին հա-
մար պատապարտն չեն գտել։ Հարկ եղել
է գիշերօթիլու պատրաստուիլ։ Եւ խօսի-
սպաշններն երկու ֆոգարներու հետ միա-
ցին փորքիկ տափի մի վրայ, որ ունէր երեք
կանգուն երկայնութիւն և մէկուկէս լայ-
նութիւն. անոր վրայ վից հոգի պէտք էին
գիշերն անցընել, փոթորկին, բուքին և ձիւ-
նին ներքեւ. թէպէտ և քիչուր էր էնք, այլ
շարժվելու տեղ չկար, ամբողջութեամբ մէկմէ-
կու մօտ, իրեւ իրիկ մի, վրանիս տակնք
մէկ փար գորգ և կաշի . . . Սոյն միջոց
հոգն միշտ կ'անշնար, և պատուելով եր-
բման թանձր ամպերը, որ զմեզ շրջապա-
տած էին, լուսնիկն ազատ լուսով մերթ
կը ցուցնէր մեզ Երասխայ ձորոցն մի
մասը, մերթ փոքրն Մասիս, մերթ տն-
գունցները՝ որ մեր ոտքից ներքեւ սե սե կե-
ցած էին, և կը պատէին մեր անհամարյոյր
ննջարանը յերից կողմանց, որ Մոն-Պա-
նի բարձրութենէն վեր գրգի վրայ էր . . .
Այդ բուռական չէ. կը սկսին որոտմունք,
որ ահաւոր են այն բարձրութեան վրայ.
Խեղճերն որոտալից ամպերու մէջ են։
Օյր կը լուսաւորի օձապտոյտ փայլակնե-
րով, և լայն բոցաւորու. ակօսնիքով, որք
չբնական առարկաներուն վրայ մեծ լոյս կը
տարածեն, — զուարճայի գիրք։ Ի լրու մն
ամենայնի, անտանիկ ծծու միջ հտան, ինչ-
պէս Վիլիսլորտի և Չելինքերայ, կը տանջէ
դնտաւ։

Այսպէս կը գրէ ինքնին խոճքոյ այդ ո-
րտապին գիշերի մասին՝ զոր անցուցել
էր Սարաղայ գագաթնան մօտ։ « Ի գի-
շերի 2-3 օգոստոսի, ամբողջ եր'ք ժամ
որտապից ամպոց մէջ անցուցինք, որք
հսկայական ձեռք երկարական մարտից
կը ձեւայրէին. մեզ պահապան կանգնած
էին սրածայր ժայռերն, որոց վրայ ըն-
տրած էինք գիշերօթիլու տեղ։ Սձմեռ փայ-
լակներն, որոց լայնքն՝ ըստ երեւութիւն ե-
րեք կանգունէ պահաս չէր. ինչպիսի փայ-
լակներ, որք և ահագին որոտմանց հա-
րուածնիքով՝ միանգիւղ կ'անցնէին մեր ան-
ձուի օթարանին քովէն։ Ժամը 11ին կայ-
ծանի զարիստ կործանեց սրածայր ժայռ
մի. հանգարանեաւ սակաւիկ մի փոթորի-
կն, այլ բուքն և հոգն կը շարունակէին »։

Արժանի է նշանակելու՝ որ Սիվոլորով
հասաւ Սարաղայ ձայրը, օգոստոս 11ին
ձիւց առաւօտեան ժամը 11ին, Նոյն օրն
այն է օգոստոս 11ին, Սիվոլորովէ 52 առ-

րի առաջ կանգնած էր այն ձայրին վրայ
գորսվայն խոճքոյ։

Օգոստոս 1 ի գիշերն, վրանին ներքեւ
ընկզմնեալ, մեր այս չորս օրուան ունե-
ցած տապաւորութեանց արկածից և զգայ-
մանց վրայ իրարու կը հաղորդակցէինք,
զի այդ չորս օրերը իբր թէ աշխարհէս
դուրս անդ մի անցուցած էինք։

Յիշեցինք Նոյեան տապաւորը, և նորա այն
մասը, որ ցայսօր կը պահուի այլ սուրբ
նշխարաւ հետ Էջմիածնայ վանքին մէջ.
Վանքին իբր թէ այս կերպով հասած է այդ
Նոյեան տապաւորն մասն։ Ս. Յակովբ, որոյ
վրայ արդէն վերը խոսեցանք, իբրեւ թէ
սաստիկ մեծ փախաբոս ունեցել է եղնելու Ս-
րարաղայ ձայրը, որ տեսնէ Ս. Գրոց սրբա-
վայրը՝ Նախահօրն մերայ Նոյի տապաւորը, որ
ըստ աւանդութեան՝ անփութ մնացել է լե-
ռան ձայրը։ Այլ ամէն անգամ որ Սուրբը
վերելից միջոց հանգչելու կամ գիշերօթի-
լու տեղ մի կը դադարի և քունի կ'երթայ,
հրեշտակը քուն եղած լուսաւորիքը (Յա-
կովբ) կը դարձնէ վաղը՝ իւր խօսքը. Թոր-
ձած է Յակովբ քանի քանի անգամ ելնել
լեռան ձայրը, և ամէն անգամուն արթնե-
ցիր է իւր խոսքին մէջ։ Հուսկ՝ ողորմելով
Աստուած լուսաւորին, հրապառնց հրեշտա-
կի՝ որ առնու մասն մի Նոյեան տապաւորն
ու տայ Յակովբայ։ Ահա այդ մասն է որ
ժառանգութիւն մնացել է Էջմիածնայ վա-
նքին։

Սիւստի-Ս. Թեոմով հաստատուելով կը
գրուցէ. « Սարաղայ ձայրը տապան չկայ.
այլ ուր է. — արդեօք մարդիկ քերտնա-
դութեամբ մասն մասն քակել և առել են,
կամ թէ տգէտ մարդիկ քակել տալի են
իրենց տնական պիտոյից համար, և կամ
մատուր թերեւ կայ, այլ ծածկուած ձիւնի
բարձրիքով՝ անտեսանելի է։ Այս բան ո-
րչափիկ գրուցի կամ հուսադրայ անկա-
րելի է . . . Ուր է Ահարոնի ծաղկած
գագաթանն, ուր տապաւորանն, ուր և Սու-
ղոմոնի տաճարն . . . »։

ԺԵ

Դարձ 'ի տուն։

Օգոստոս 12ին վաղ առաւօտ սկսանք
իջնել լեռնէն վար։ Օրն ինչպէս նախը-
թացներն շատ գեղցնիկ էր։ Թափառա-
ւեղւոյն բոլոր Քրդերն հրաբխային կոյ-
տերու վրայ բարձրացած՝ երկար ատեն
կը նայէին մեր փորքիկ խորին ետեւէն. իմ
հիւրերեկաւ տանուաւրս, որոյ՝ հրաժեշտի
միջոց՝ տուի 10 բուրլի, միակերպ ձեռքը

սորին կը զնէր 'ի նշան յարդոթեան, մինչև որ իմ ձիւս սև ժայռերուն ետև անհետացաւ :

Գեւա եւ Հիւանդագին, հազիր կրնային ինքզինքս բռնել ձիոյն վրայ : այլ միշտ կը գտնուային կը նայէին անհամբողջ եւ անուր լերին : սիրտս կը ճմլէր, զի չէի հասած նըպատակիս, առ որ կը զգայի ձկտումն :

« Այլ բաղդը շատ մօտ էր ինձ »...

Այո՛ մօտ : այլ նոյն միջոց կարի հեռու : Այլ ոչ միայն բաղդը մօտ էր, — մա՛հը մերձաւորագոյն եւս : Այլ ճամբով իշանք լեռնէն, սրեւելեան դարէն, դէպ յԱրայլս, որ բնակութիւն է Ումանեան պահակաց : Զիս կը տագնապէր մոտատանը խորհուրդ մի : զի թէպէտ եւ ես գեւ չէի իջած էրասխածորոյն մէջ, այլ նոր փորձ մի փորձելու դէպ 'ի լեռն վերելից' ոյժ կը պակասէր :

Առասպելախառն Այգիթ 'իյի' Ակոռի, որ կործանած է 'ի ժամէ, 'ի ծախմէ մնացին Ակոռի, կը նշտանակէ Արի-սաթ : Կ'ասեն, իբր թէ 'նոյ' Արարագէ իջնելու միջոց, 'ի շնորհակալութիւն ազատութեանը' խորհուրդ մի չընէին, հոն չկան է սեղան եւ մատուցած պատարագ գոհութեան Սրտուծոյ, եւ հոն տեղած է առաջին խաղողի ուտը : եւ իբր թէ այդ խաղողի ուտն եղած է մայր այգետաննայց բոլոր Երասխածորոյ եւ յիւանդու :

Քանի որ վար կ'իջնէինք՝ արեւուն ճառագայթք՝ որ բարձանց վրայ կորուսած էին իրենց զօրութիւնը, վերստին կ'էրէին, կը մրկէին : այնպէս որ երբ հասանք լերին ստորտաք՝ արեւուն ջերմութիւնը ավերակած էր :

Կ'առարարութեամբ եկանք մինչև Ակոռի, այն աստիճանի յոգնածութիւն կը զգայի, որ չէի կրնար խօսել : սաստիկ ծարաւ՝ կարծես ոգիս չորացել էր :

Պ. Կոնչայիվ, Միլարը-Խալֆա-Քուլիբէկ եւ քանի մի ձիաւորք, գեւ Ակոռի հասած՝ բաժնուեցան մեզմէ : Ի սրտէ շնորհակալ եղաւ բարաջապարտ 'իկիլոյ Պետրովիչին, այն ամէն զրկանաց փոխարէն, զոր կրեց ինձի համար : այլ հրաժեշտի մնաց բարձր, նորէն տեսնուիք բաւելու մէջ, զոր դուստրեցի, նա լաւ իմացաւ՝ որ բերնով կ'առնէի, այլ յոյս չունէի միւսանգամ տեսնուիս :

ՅԱրայլս՝ որպէս զի ծարաւն անցրենք՝ գնացինք դիտել մի, եւ հոն հանդիպեցանք Ումանեան զօրաց սպահնիկուն : Նոքա լեղով որ մեք շխալէ յԱրարագայ կը գաւանձէր, եւ թէ քանի մի ժամ առաջ նոցա ընկերն Սիվիլորով, այն պատմական

քաջագործութիւնն ըրած էր, հաւտալին չէր գար : պատմական զրուցիցի, զի սակաւաթիւ են երջանիկ անձինք, որք կուսած լինին Սրբազան Գրոց հսկային ճերմակ խալիք, եւ որոց անուանք գրուածուած են պատմութեան մէջ, եւ նոքա ծանօթ են ընդշնորհ գրեմական աշխարհի մէջ : Հոս մեզ տեսութեանն եկաւ : սպասական ծերունին, զօրապետն Աւաքելեան : շատ կը ցաւիմ որ չկարողացայ ընդունել այն սրտաբաց ճաշը, յոր հրախրեց դիմ նա, իւր զօրաց սպահնիկուն հետ 'ի միասին :

Սիվիլորովի հետ համբուրի հրաժարելու միջոց՝ երկուքս եւ լացինք : . . . Իբրեւ թէ նախորդակ եղած՝ թէ այն կրածնեւրէս ետև այլ եւս աւելի ծանրազոյն փորձանք միզի կը սպասեն : Զհամարձակեցանք ասելու Նորէն տեսնուիք :

Ի 15 օգոստոսի ընդ Պ. Զիլինսքայ հասանք յԱյրեսան, Անկարելի է գրելով բացատրել այն զգացմունքը՝ զոր ունեցայ Երեւան մտնելու միջոց, լսելով ծանօթ եղանակները, զոր երաժշտը կը նուագէին, եւ որք կը յիշեցրնէին ինձ՝ հեռաւոր Պետրք բուրգ, Պաւլովք իւր երաժշտութեամբ : ընտանի էր այն ամէնն եւ սրելի, որ եւս աւելի թանկադին կու գայ մարդու ըզկնի երկար բաժանման : Թէպէտ եւ իմ պանդրխտութիւնս երկար ժամանակ չէր : այլ ինձ յաւիտենականութեան չափ երկար եւ ընկեցաւ :

Արտը 13 օգոստոսի յԱյրեսան տնցուցի : Զգալի որ հիւանդութիւնս երթալով կը դայրանայ : ամենայն ինչ՝ ինձ միզապոտ կ'երեւար, իբրեւ յերազի կը դանդաղէի : կը յիշեմ որ Պ. Զիլինսքայ տուեւ ճաշիցի, այլ իբրեւ յերազի : Հիւանդ հիւանդ եղալ յԱյրեսանէ՝ դառնալու 'ի հայրենիս : Ոչ մի անգամ՝ ետև կը դառնայի տեսնելու տալուսն եւ բարձրագոյն Արարագը, եւ յոյժամայս մտք կ'որոնայի անիծելու, տեսնելու . . . : Բիծալուս Արարագ, կուպուտակն Ուման իւր աշնանաշուշ ցրտովը, Տիլիթանու ճոխ հովիտն եւ մահարեր խոտնեան ցարանազ, այլ ամէնն անտանելի եւ անհանգուրժելի էին ինձ համար, անախորժ եւ թշնամական իմի էին :

Հիւանդ հասալ 'ի Թիֆլիզ : կը յիշեմ սիրալիր ընդունելութիւնը Պ. Ֆոն-Քոլքուրի : երկուդն գնացաւ Ի. Սիլիւրիցիկի հիւրընկալ տունը, այլ այդ ամէնն միշտ նախան կերպով կը յիշեմ :

Յետոյ անցալ կովկասու լեռանց գօտին, Գուգուր, Կազբէկ, Գարիալ՝ իւր պղտոր Թերեշովը . . . Ինչպէս ոյժս բաւեց այդ ճամբորդութեան : Հոն այնտեղ

կովկասու բարձունց վրայ, ուր երբեմն արծիւն պատուած էր Պետութեան սիրար, նոյն տանջանքը զգացի և ես: Անտեսանելի արծիւն կը պատահէր իմ սիրաս: Բորբորումն թորի և կրծոց: Հեպլնիթաց կառքին, որով կ'երթայի, ամէնմի ցնցման, ամէն մի հառաչելու, ձեռքով շարժում մի ըրած միջոցիս, ինձ այնպէս կ'իրեւէր, որ մէկը աքցանով թորս կը փրցընէ:

Ի Ռոսսով բոլորովին ինքզինքս կորու-

սի: Ես ինքս չեմ գիտեմ անտի մինչև ցիւն աւրբուրդ գնալու:

Այժմ ես հոռ եմ, 'ի Մենթոն, երկնազոյն ծովուն եզերքը: Զիս հոս բերին՝ որպէս զի Արարադայ ինձմէ յափշտակածը նորէն ետ դարձնեմ: Այլ կատարեալ դարձ ոյժիս՝ տարակուսելի է: Ահ, թէ չուտով տուն դառնայի . . . :

Այս է դառն պատմութիւնն Արարադայ վրայ ելնելու իմ փորձիս:

ԹԱՐԳՄ. Հ. Բ. Վ. ԳՈՒՆԵՐԵԱՆ

ՈՒԽՏԱԳՆԱՅՈՒԹԻՒՆ

ԱՌ ՏԻՐԱՄԱՅՐՆ ՀԱՅՈՑ* Ի ԿՍՄԵՆԻՑ ՓՈՏՈՒԵԱՆ

Օգոստոս 16. — Մեկտեմբեր 16. 1883:

ՅԱՌՈՋԱԲԱՆԻ ՏԵՂ

Լեհաստան աշխարհն՝ ժՈՂ գտրէն ոկսեալ մեր ազգին Հայ գաղթականաց ապաստանարան եղած է. ուր մեծաւ մեծ արտօնութիւններ վայելած են բազմաթիւ ազգային, քանի քանի անգամ թողած իրենց հայրենիքը, իրենց փառաշէն Անին, երկրորդ հայրենիքը նորաւ են այդ աշխարհքը: Նշանաւոր են ասոր երկու քաղաքները, կալիցիոյ մէջ Իլլիով (կամ՝ ըստ մեր ձեռագրոց Լով) որ այժմ գերմանական անուամբ Լէմպերկ կը կոչուի, փոստիոյ նահանգին մէջ՝ Կոմենից, զոր Հայք չինած և շէնցուցած են, և 600 տարի Հայոց քաղաք համարուած է: Յամին 1876, հոկտեմբեր ամսոյն մէջ, ճանապարհորդութեամբ եղած էի Ելլիով, ուր ցարդ կանգուն կայ ազգային փառաւոր եկեղեցին, հանդերձ Լուսաւորչայ խորանով, ուր կը նստի և Հայոց արքեպիսկոպոս, յիւրում վեհաբանին, ունի իրեն կղերանոցը, ուր կայ և ցարդ Հա-

յոց կուսանաց վանք, որոյ մայրապետը օրիւրդաց դաստիարակութեան կը պարապին: Նոյն ժամանակի թեմակալ առաջնորդն էր գերապատիւ Տէր Գրիգոր Ռամաշքան, որ մեծաւ մարդասիրութեամբ հիւրընկալեց մեր նուաստութիւնը: Իլլիովի Հայոց մէջ՝ այն ատեն միայն երկու անձինք կային որ լաւ համարձակ կը խօսէին հայերէն, առաջինն անշուշտ ինքն էր Գերապատիւ Տէրն, իսկ երկրորդն՝ կուսանաց վանքին պառակաւ Մայրը՝ Վարդուհի, որ մեծ հաճութեամբ ալ կը խօսէր ազգային լեզուն: Անշուշտ այժմ տեղացի երիտասարդ քահանայք եւ կը խօսին իրենց բնիկ լեզուով, վասն զի մեծ ջանք տեսայ ես նոցա մէջ հայերէն լեզուի մշակութեան, նորին Արհիպապատիւ Հանգուցելոյն: Գորաւոր լեզուիս անսպասելի ընթերցանութիւնը ժամասացութեան մէջ հաւաստիք են գրածիս:

Յիրաւի՛ ինչպէս ես, նոյնպէս կարծեմ ամենայն ազգային ճանապարհորդ, նոր տեսակ մի զգացումն կ'ու-

* Այսպէս է անուն պատկերին ընդ համարէն

Լեհաստան, Matka Boska Armiańska.